

Կ-110<sup>3</sup>-03.10.2012-ԱՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Ուժը կորցրած ճանաչել «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-171-Ն օրենքի 77-րդ հոդվածը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»,  
 «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու  
 մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և  
 փոփոխություն կատարելու մասին», «Փրկարար ծառայության մասին»  
 Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քրեակատարողական ծառայության  
 մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Դատական ակտերի  
 հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հան-  
 րապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ  
 ներկայացված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<b>«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</b>			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով վերախմբագրվող` «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում լրացնել «, ինչպես նաև պարտադիր ծառայության զինծառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով վերախմբագրվող` «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «զինծառայողներին» բառից հետո լրացնել «և նրանց հավասարեցված անձանց» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
<b>«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</b>			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծով լրացում կատարել «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում` ամրագրելով, որ ծառայության նոր վայր տեղափոխվելու և միանվագ դրամական օգնությունների չափերը հաշվարկելու համար պաշտոնային ու զինվորական	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:

	կոչման դրույքաչափերը որոշվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված պաշտոնային ու զինվորական կոչման դրույքաչափերի ու դրանցից պահված եկամտային հարկի տարբերության չափով:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով (լրամշակված տարբերակում` 2-րդ հոդվածով) վերախմբագրվող` «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում «ծևով ստացված եկամուտները» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև պարտադիր ծառայության զինծառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով (լրամշակված տարբերակում` 2-րդ հոդվածով) վերախմբագրվող` «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում «զինծառայողներին» բառից հետո լրացնել «և նրանց հավասարեցված անձանց» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: